

St Gregory Armenian Church Parish Directory

<i>Parish Council</i>	<i>Howard Emirhanian</i>	909 596 1010
<i>Ladies Society</i>	<i>Aida Sethian</i>	626 695 8013
<i>Men's Forum</i>	<i>Berj Gourdikian</i>	626 355 8780
<i>Friendship Club</i>	<i>Isabel Kouyoumjian</i>	626 446 6058
<i>A.C.Y.O Seniors</i>	<i>Christina Hilalian</i>	626 716-4300
<i>Choir Director</i>	<i>Elise Tashjian</i>	626 356 9208
<i>Hovsepien School Office</i>		626 578 1343
<i>Hovsepien School</i>	<i>Raffy Boulghourdjian</i>	818 242 8584
<i>Saturday School</i>	<i>Norayr Dadouryan</i>	626 683 7211
<i>Sunday School</i>	<i>Marguerite Hougasian</i>	626 351 8137

Coming Events

Wed 8/5/15	Friendship Club Luncheon	12:00p.m.
Sun 8/16/15	Assumption of the Holy Mother of God	12:30p.m.

Կարեւոր Ծանուցում

Կը խնդրենք մեր հաւատացեալներէն մնալ եկեղեցի Կիրակի օրուան պաշտամունքի ընթացքին մինչեւ վերջ ի յարգանք այն ընտանիքներուն, որ հոգեհանգստեան պաշտօն խնդրած են: Հոգեհանգիստը միայն խնդրողներուն համար չէ, այլ մեր բոլոր նշեցեալներուն համար է: Հաճեցէք եկեղեցի մնալ մինչեւ վերջ, ստանալու համար արձակման օրհնութիւնը, համբուրելով Աբ. Աւետարանը:

Հոգեւոր Հովի

Important Notice

We kindly request that during services, the faithful remain in church following Holy Communion, as a sign of respect for the families who have requested requiem service for their loved ones. Additionally, we ask that following the final blessing, we all honor the tradition of approaching and reverently kissing the Holy Bible.

Parish Priest

Յովհաննու Աւետարանէն (John) 3:13-21

Արդ, ոչ ոք երկինք ելած է, բացի միայն անկէ, որ երկինքէն իջաւ. մարդու որդին՝ որ երկինքն է: Եւ ինչպէս որ Մովսէս անապատին մէջ բարձրացուց օձը, այնպէս պէտք է բարձրանայ մարդու Որդին, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ յաւիտենական կեանքը ընդունի. քանի որ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը. որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ չդրկեց որ ան դատէ աշխարհը, այլ որպէսզի աշխարհը անով փրկուի: Ով որ կը հաւատայ անոր՝ պիտի չդատապարտուի, իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, քանի որ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին: Եւ դատաստանը այն է ահա. որ լոյսը աշխարհ եկաւ, սակայն մարդիկ խաւարն աւելի սիրեցին՝ քան լոյսը, որովհետեւ իրենց գործերը չար էին. որովհետեւ ով որ չար բան կ'ընէ՝ կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին, որպէսզի իր գործերը իր դիմացը չդրուին: Իսկ ով որ ճշմարտութիւնը կը գործադրէ՝ կու գայ լոյսին, որպէսզի յայտնի ըլլան իր գործերը՝ թէ Աստուծոյ կատարուեցան:

No one has ascended into heaven except He who descended from heaven, the Son of Man. And as Moses lifted up the serpent in the wilderness, so must the Son of Man be lifted up, that whoever believes in Him may have eternal life. "For God so loved the world, that He gave His only Son, that whoever believes in Him should not perish but have eternal life. For God did not send his Son into the world to condemn the world, but in order that the world might be saved through Him. Whoever believes in Him is not condemned, but whoever does not believe is condemned already, because he has not believed in the name of the only Son of God. And this is the judgment: the light has come into the world, and people loved the darkness rather than the light because their works were evil. For everyone who does wicked things hates the light and does not come to the light, lest his works should be exposed. But whoever does what is true comes to the light, so that it may be clearly seen that his works have been carried out in God."

First Timothy (U. Տիմ.) 4:12 – 5:8

Let no one despise your youth, but set the believers an example in speech and conduct, in love, in faith, in purity. Until I arrive, give attention to the public reading of scripture, to exhorting, to teaching. Do not neglect the gift that is in you, which was given to you through prophecy with the laying on of hands by the council of elders. Put these things into practice, devote yourself to them, so that all may see your progress. Pay close attention to yourself and to your teaching; continue in these things, for in doing this you will save both yourself and your hearers.

Do not speak harshly to an older man, but speak to him as to a father, to younger men as brothers, to older women as mothers, to younger women as sisters---with absolute purity.

Honor widows who are really widows. If a widow has children or grand children, they should first learn their religious duty to their own family and make some repayment to their parents; for this is pleasing in God's sight. The real widow, left alone, has set her hope on God and continues in supplications and prayers night and day; but the widow who lives for pleasure is dead even while she lives. Give these commands as well, so that they may be above reproach. And whoever does not provide for relatives, and especially family members, has denied the faith and is worse than an unbeliever.

Ո՛չ մէկը թող արհամարհէ քու երիտասարդութիւնը, հապա տիպար եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարքով, սիրով, հաւատքով ու մաքրակեցութեամբ: Մինչեւ որ գամ՝ ուշադիր եղիր: Ոմանք՝ հոգիով, հաւատքով կարողալու, յորդորելու, սորվեցնելու: Անհոգ մի՛ ըլլար քու մէջդ եղած շնորհին հանդէպ, որ մարգարէութեամբ տրուեցաւ քեզի՝ երէցներուն ձեռնադրութեամբ: Խոկա՛ այդ բաներուն մասին եւ զբաղէ՛ ատոնցմով, որպէսզի քու յառաջդիմութիւնդ երեւնայ ամենուն: Ուշադիր եղիր դուն քեզի ու վարդապետութեան, եւ մի՛շտ յարատեւ ատոնց մէջ. քանի որ այդպէս ընելով՝ պիտի փրկես թէ՛ քեզ, թէ՛ քեզ յողները:

Մի՛ սաստեր տարեցը, հապա յորդորէ՛ զայն՝ հօր մը պէս. երիտասարդները՝ եղբայրներու պէս, տարեց կիները՝ մայրերու պէս, դեռահասակները՝ քոյրերու պէս, բոլորովին մաքրակեցութեամբ: Պատուէ՛ այն այրիները՝ որ իրապէս այրի են: Բայց եթէ այրի մը ունի զաւակներ կամ թոռներ, անոնք թող սորվին նախ իրենց տան մէջ բարեպաշտութիւն ցոյց տալ, ու փոխարէնը հատուցանել իրենց ծնողներուն. որովհետեւ ա՛յդ է բարին եւ ընդունելին Աստուծոյ առջեւ: Իսկ ան որ իրապէս այրի է ու մի՛նակ մնացած, կը յուսայ Աստուծոյ, եւ գիշեր-ցերեկ կը յարատեւ աղերսանքի ու աղօթքի մէջ. մինչդեռ փափկասէր այրին մեռած է, թէպէտ կ'ապրի: Պատուիրէ՛ այս բաները, որպէսզի անարատ ըլլան: Բայց եթէ մէկը չի հոգար իրենները ու մա՛նաւանդ իր ընտանիքը, ան ուրացած է հաւատքը, եւ աւելի գէշ է՝ քան անհաւատ մը: Իբր այրի թող դատուի ա՛ն՝ որ վաթսուն տարեկանէն կրտսեր չէ, մէկ մարդու կին եղած է, ու բարի գործերով վկայուած. եթէ զաւակներ մեծցուցած է, հիւրեր ընդունած, սուրբերուն ոտքերը լուացած, տառապեալներուն նպաստած, ամէն բարի գործի հետամուտ եղած:

AVAILABLE FOR SPONSORSHIP

If you would enjoy the opportunity of investing in the growth of our parish, please consider sponsoring one of the following items, either in your name or in memory of your loved one:

Stained Glass Window in the Sanctuary	\$10,000
Stained Glass Window near steps to Balcony	\$5,000
Small Chandelier	\$5,000
Narthex Doors (main/ inside)	\$15,000
One of Two New Side Altars	t.b.d.
Elevator	\$25,000
Bell Tower Mural	\$100,000

St. Gregory Sunday School 2015/2016
Every Sunday Morning 11:00a.m. 12:30p.m.
Dunaians Hall Registration Sept. 13, 2015
For information call Marguerite Hougasian
(626) 351-8137

“Train up a child in the way he should go
And when he is old, he will not depart from it”
Proverbs 22:6

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
 Կիրակնօրեայ Վարժարան
 Ամէն Կիրակի Առաւօտեան 11:00 - 12:30
 Տունայեանց սրահին մէջ
 Արձանագրութիւն Սեպ. 13, 2015
 Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել
 Մարկրիթ Ղուկասեանին՝ (626) 351-8137
 «Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը,
 որպէս զի իր ծերութեան ատենն ալ անկէ
 չխտորի»
 Առակաց 22:6

Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայց. Եկեղեցի
Վերափոխումն Ս. Աստուածածնի
եւ Խաղողորհնէք

Կիրակի Օգոստոս **16, 2015**

- Առաւօտեան Ժամերգութիւն ժամը **9:30**-ին:
- Ս. Պատարագ ժամը **10:30**-ին:
- Խաղողորհնէք Պատարագի վերջաւորութեան:
- Հիւրասիրութիւն Եկատեան Սրահ յաւարտ
Ս. Պատարագի:

Ս. Աստուածածնի Վերափոխման Տօնին առթիւ
փոխան խաղողի նուիրատուութիւնները գնահատելի են:

Խաղողի նուիրատուութեան համար հեռաձայնել
եկեղեցու գրասենեակը՝
(626) 449-1523

St. Gregory the Illuminator Armenian church
Feast Of The Assumption Of The Holy Mother
of God & Grape Blessing
SUNDAY – AUGUST 16, 2015

- **Matins – 9:30 A.M.**
- **Solemn Divine Liturgy – 10:30 A.M.**
- **Blessing of grapes immediately after
Divine Liturgy.**
- **Reception in Yegavian Hall.**

Donations of grapes will be gratefully accepted

**To Donate Grapes for this service,
please call the church office: (626) 449-1523**

Փաստօրհան Սբ. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու

Շաբաթօրեայ Դպրոց
Առաւօտեան Ժամը **10:00**-ին
Դասաւանդութիւն պիտի սկսի Սեպտեմբերին

St. Gregory The Illuminator Saturday School
Classes will begin in September @ 10:00AM

Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու
Շաբաթօրեայ Վարժարանի մէջ
ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Չափահասերու Համար

Ամէն Շաբաթ օր
10:00-1:00

Տեղեկութիւններու համար դիմել
Պրն. Նորայր Տատուրեանի 626-683-7211

Մայր նիւթեր

Գրաճանաչութիւն . Երկխօսութիւն . Առօրեայ
արտայայտութիւններ . Հայրենագիտութիւն .
Հայաստանը Այսօր

St Gregory The Illuminator Armenian Saturday School
Armenian Language Courses For Adults

Every Saturday 10:00-1:00p.m.

For More Information Please Call

Mr. Norayr Dadouryan 626-683-7211

Main Subjects

Alphabet, Conversations, Armenian History And
Armenia Today

Երգչախումբը սիրով կ'ընդունի նոր անդամներ
Հետաքրքրուողները հաճին դիմել
Էլիզ Թաշճեանի՝ Երգչախումբի ղեկավարին
The Choir welcomes new members
If you are interested, please see Elise Tashjian,
the Choir Director

ANNOUNCEMENT

The Pastor is available to visit our parishioners in the hospital, nursing homes, or conduct Home Blessings, and other sacramental needs and consultations. Please call the church office at 626-449-1523. We would like to increase our outreach to church members who are unable to attend services. Any parishioner who has a concern is welcome to call the pastor or the Parish Council

Կը խնդրուի անջատել ձեր բջիջային
հեռախօսները եկեղեցի մտնելէն առաջ

Please turn off your cell phone
when entering the church.

Հոգեհանգստեան Խնդրանքներ
Հոգեհանգստեան խնդրանքները հաճեցէք ներկայացնել մինչեւ
Հինգշաբթի Կէսօր, որպէսզի կարելի ըլլայ յիշել Թերթիկին մէջ

Requiem Services

We ask those who wish to have hokehankisd conducted for their loved ones on a given Sunday, to please submit their names by Thursday noon for printing in the Sunday Bulletin

Remember The Church In Your Will


If certain information is omitted, missing or incorrect in this issue, please excuse any occurrences and contact the Church Office so we may make the correction in the next issue of the Bulletin

ST. GREGORY ORTHODOX **BOOKSTORE**

Visit our bookstore

gifts for any occasion are available
Very Affordable Highly Attractive
Invaluable Books of Armenian Church
History for all your Friends and Family

Every Sunday after
Church Services



Ս. ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳՐԱԽԱՆՈՒԹ

Որեւէ առիթով՝ ձեր նուէրներուն համար
Այցելեցէք եկեղեցոյս ԳՐԱԽԱՆՈՒԹը
Մատչելի Գիներ

Արժէքաւոր Պատմական Հատորներ Ձեր
Ընտանիքին եւ Բարեկամներուն Համար
Ամէն Կիրակի Ս. Պատարագէն ետք

PARISH FELLOWSHIP HOUR

Our Parish Fellowship Hour, which follows Divine Liturgy each week in the Yegavian Hall, is a wonderful opportunity for parishioners to meet, greet and enjoy one another's company. Truly one of the most important aspects of our community life, it's more than a time to enjoy coffee, tea and refreshments.

We've always relied on parishioners to host the Parish Fellowship Hour, for which we are all grateful. In that tradition, we ask that any individual, couple, family or group of families to come forward and pledge their support in hosting Fellowship Hour on either a happy occasion or in memory of a loved one.

We take this opportunity to thank all the volunteers who have hosted the Parish Fellowship Hour in 2014, as we encourage others to come forward and do likewise.

To host a Parish Fellowship Hour or learn more about this program, please contact our Fellowship Hour Coordinator, Mrs Chake Konialian at 626-359-8630. You may also contact the church office at 626-449-1523 or email at stgregoryarmenianchurch@yahoo.com



“God loves a cheerful giver” 2Co.-9:7

Հոգեհանգիստ – Requiem

- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի Վիգէն Գոնեալեանի մահուան 9րդ տարեկիցին առիթով: Խնդրողներն են՝ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաքէ Գոնեալեան, Տէր եւ Տիկին Լեւոն եւ Հուրի Քէշիշեան եւ զաւակները Սարմէն եւ Սարին, Տէր եւ Տիկին Յովսէփ եւ Լենա Գարսեան, Տոքթ. Համօ եւ Յովին Մաթոսեան եւ զաւակները Արման եւ Ատրիէն: Ինչպէս նաեւ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու Ծխական Խորհուրդի եւ Տիկնանց Միութեան Անդամները:
- Requiem service in memory of **Vicken Konialian** on the occasion of 9th year of his passing is requested by Mr. & Mrs. Krikor & Chake Konialian, Mr. & Mrs. Levon & Houri Keshisian & children Sarmen & Sarin, Mr. & Mrs. Hovsep & Lena Kbresian, Dr. Hamo & Tsoin Matossian & children Arman & Adrian & St. Gregory Parish Council & Ladies Society Members.

